ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0010, ք.Երևան, Կորյունի 15/1, Հեռ: (00 37410) 511-773

№ ԴԴ -3-Ե- 5029

«28» հունիսի 2021թ.

«ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Տ. ՂԱՐԻԲՅԱՆԻՆ
«ՕՊՏՇԻՆ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Ա. ՄԱԿԱՐՅԱՆԻՆ

Սույնով ծանուցվում է, որ Դատական դեպարտամենտի կարիքների համար գրասենյակային նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/04» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերի գնահատման արդյունքում Ձեր կողմից ներկայացված հայտերում արձանագրվել են հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, մասնավորապես՝

1. «ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ

- էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունում (Հավելված 1) գործունեության հասցեն նշված է ոչ ամբողջական, միաժամանակ ռուսերեն լեզվով նշված մասնակցի անվանումը չի համապատասխանում մասնակցի՝ հայերեն լեզվով նշված անվանմանը,

2. «ՕՊՏՇԻՆ» ՍՊԸ

-էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունում (Հավելված 1) ռուսերեն լեզվով մասնակցի անվանումը նշված չէ (նշված է մասնակցի հայերեն անվանումը):

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/04» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.11 կետը՝ առաջարկվում է մինչև սույն թվականի **հունիսի 29-ը ներառյալ** համակարգի միջոցով շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները:

Միաժամանակ հայտնվում է, որ սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում հայտերը կգնահատվի անբավարար և կմերժվեն:

ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ **ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Կատ՝. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/04» ծածկագրով
գնման ընթացակարգի համակարգող՝ Ա. Խաչատրյան
Հեռ.՝ /+37410/ 511-787, 511-788